



Շ Ա Ր Ա Թ Վ Թ Ե Ր Թ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճայիվ

ԺՊ Տարի, Թիւ 18

Շ Ա Ր Ա Թ

9 Նոյեմբեր, 1897

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագինն է Տարեկան՝ Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դան. : Վեցամսեայ Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դան. : Հասր 30 փարայ : Բաժանորդագրութիւնը թիւ վրայ է, տարեկան բաժանորդները պիտի ստանան 52 եւ վեցամսեայները 26 թիւ Ծաղիկի : Պաղտատեան Կրթութեան Կ'առնէ հասուցանել բաժանորդներուն վնասները :

Եթէ Ծաղիկի հրատարակութիւնը ո'ր եւ է արգելի հանդիպի : Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցեխարս նուեր ստանալու : Հանրօրոյս նիւթերու վերաբերեալ յօդուածներ եւ քրտակցութիւններ ընդհանրապէս թեամբ կ'ընդունուին : ՀԱՍՑԷ. — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ պէտք է ուղղել Պաղտատեան Կրթութեան Կ' Պոլիս, Սուլթան Համամ, թիւ 14 :

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏԲ Է ՎԱՐՈՒԻԼ ՏՂԱՅՈՑ ՇԵՏ

Տղայոց վրայ խօսիլ ի ներկայութեան անոնց կը նստասէ այնպիսի բնութեանց որ գովելի չեն : Ո՞վ տեսած չէ փոքրիկ տղու մը ամօթախառն երկիւղածութեամբ վար նայելն, երբ իւր հայրն անխորհրդաբար կը պատմէ ուրիշի մը անոր յանցանքները : Երբ այսպէս տղայոց թերութիւններն ի տես կը դրուին անխորհրդաբար, անոնցմէ ոմանք կը վնասին եւ ոմանք ալ կը կարծրանան : Ընդհակառակն եթէ անոնց փայլուն խօսքերն ու գործքերն իրենց ներկայութեանը յիշուին, չուտով կը կորուսանեն այն անմեղ համեստութիւնն որ տղայոց հրապոյցն է : Զգոյշ պէտք է լինել նաեւ չխօսիլ երբեք մանկանց բնական պակասութեանց վրայ՝ իրենց առջև : Անոնցմէ զատ ի ներկայութեան տղայոց բնաւ այնպիսի խօսակցութիւնք պէտք չէ լինին որք յարմարութիւն չունին անոնց, նոյն իսկ անոնց որ եւ իցէ բանով մը խաղացած կամ զբաղած ատեն հարկ է զգոյշ ըլլալ այն տեսակ պարագայից մէջ մանրամասնաբար մտիկ կընեն մինչդեռ կը կարծուի թէ կը խաղան :

Մասնաւորապէս պէտք է նկատել նաեւ տղայոց անհատական ճաշակներուն եւ ունակութեանց : Անոնք առհասարակ միեւնոյն կաղապարով կաղապարեալ չեն, ուրեմն անոնց կրթութիւնն յարմարեցնելու է իրենց բնաւորութեանց : Հագուստի, կերակրոյ, գործի, զուարճութեանց եւ ուսմանց մէջ պատշաճ աստիճանաւ մը ինկատ առնելու է անոնց ճաշակներն : Եթէ փոքրիկ աղջիկը գորտաւոր հակամատուցիւն մ'ունի գործիքներու հետ խաղալ՝ փոխանակ պաճուճապատանքներու հետ խաղալու,

է՞նչ պատճառ կայ որ գո՞հ չընես գինքն, եթէ տղադ առաւել կ'ընարէ մատիտ եւ նկարներ՝ քան թէ զմելի եւ խաղի մարմարիոնէ գնդակներ՝ մի յանդիմաներ գինքն, այլ իմաստութեամբ առաջնորդէ անոր հակամատուցիւններն, որք յառաջանալով կրնան լաւագոյն հետեւանք յառաջ բերել :

Կան տղայք որ խիստ զգայուն են իրենց հաղուստին նկատմամբ : Օրինաւոր սահմաններէն դուրս չհնչելով ջանա՛ գո՞հ ընել տղու մը ճաշակն իւր հաղուստին նկատմամբ, եւ յուճապէս մի հակառակիւր իւր միտումներուն : Հաւանական է որ զաւակներդ այնքան շատ պիտի չխորհին իրենց զգեստներուն վրայ եթէ իրենց հաճելի եղածն ձեռք ձգեն, եւ պիտի չզգան թէ պարտաւորեալ են իրենց ճաշակին հակառակ կերպով զգեստաւորիլ :

Զաւակներուդ հարցմանց պատասխան տուր : Միայն թէ կրնաս երբեմն յետաձգել պատասխաններդ, նաեւ հոգ տանելով որ այլոց հետ խօսակցութիւն ըրած միջոցիդ չընդմիջեն զքեզ : Անոնց զեռափթիթ մտքերն կ'եռան բնական հետաքրքրութեամբ : Ամենայն ինչ նոր է անոնց համար, եւ եռանդ ունին հետազօտելու : Երբոր պատշաճ եւ հնարաւոր, գո՞հ ըրէ նոցա հետաքրքրութիւնն : Ամեն ատեն հարկ չէ լիուզի բացատրել ինչիւր մը՝ սոսկ հասարակ մի կամ երկու պարզ ճշմարտութիւնք այն խնդրոյն նկատմամբ բոլորովին գո՞հ կընեն մանուկը : Մեծ սխալմունք է տղու մը բնական հետաքրքրութիւնն սաստել, այնպէս որ թողլով իւր ծնողքն զիմէ ծառայից կամ ուրիշ անձանց որք պատասխանատուութիւն չեն զգար անոնց կրթութեան համար :

Մի վնասիւր երբեք զաւակացդ համար, երբ անոնք գէշ բնութիւններ ցոյց կ'ուտան : Քու պարտք է բարի բնութիւններն զարդացնել, եթէ զաւակդ սուս մը կը խօսի՝ փոխանակ արտաքսելու զնա սրտէզ իբր՝ ամբարիշտ մէկը՝ սովորեցուր անոր ճշմարտախօսութեան գեղեցիկու-

Թիւնն եւ օգուաններն : Մասնաւորաբար աշխատէ որ այնպիսի համակրութիւն մը ունենայ վրայդ , որ ոչ ամօթոյ եւ ոչ պատժոյ երկիրդն չիորձէ զինքն յանցանքն պահելու կամ զքեզ խաբելու : Յանցանաց զէմ ամենէն ապահով պահպանութիւնն է սիրալիր վաստակութիւն ծնողաց եւ հօգատակաց միջեւ :

Խ Ա Ր Բ Ե Ր Պ Ի

ԱՂԶԿԱՆՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՕԼԷՃԸ

Գօլէճը քաղաքին Ս . Յակոբ թաղին արեւմտեան ծայրն է , որ հրամայող դիրք մը կը բռնէ յիշեալ թաղին եւ մօտակայ գիւղերուն վրայ :

Ամբողջ հաստատութիւնը կը բաժնուի հինգ ճիւղերու , որք են Պէպէք կամ Մանկապարտէզ (Kinder Garten) Մանկական , Վարժարան եւ Գօլէճ :

Պէպէքի եւ Մանկարանի փոքրիկ աղջիկներն զրաւիչ զրութեամբ զբօսեցուցիչ պատկերներով ու խաղալիքներով մէկտեղ կը սովորին հայերէն ընթերցանութիւն , խնդրագր եւ բերանացի այլ եւ այլ դասեր : Աշակերտուհեաց թիւը 196ի կը հասնի : Վարժուհիներն են Օր . Սաչատուրեան , վարժուհի Եղսա Շուշանեան , վարժուհի Երլարզեան , Օր . Հապիպեան եւ Բամբիչ Սուլթան Պօզոսեան :

Կրթարանի Սանուհիք են 91 հատ , հոս կը սովորեցուի Հայերէն , եւ Անգլիարէն ընթերցանութեան թուադիտութեան նաեւ գրի եւ երգի դասեր :

Վարժարանի Սանուհեաց կլոր թիւը 20 է : Վարժարանը կը բաղկանայ երեք կարգերէ , մէն մի կարգ մի տարուոյ յարատեւական ընթացք կը պահանջէ : Կը պատահի որ ուշիմ աղջիկներէն ոմանք այս երեք տարուոյ ընթացքը տարի ու կեսէն կամ երկու տարիէն յրացնելով կը յաջողին Գօլէճի կեանքն ապրել : Հոս կ'ուսուցուի հին ու արդի Հայերէն , Անգլիերէն ընթերցանութիւն հանդերձ թարգմանութեամբ , շարադրութիւն , մարդակազմութիւն , ալճէպրա , կարի , ձեւագիտութիւն , ձեռագործութիւն եւ երգի դասեր : Վարժարանի եւ Կրթարանի վարժուհիք են Սարլա վարժուհի Պետրոսեան , Աննա վարժուհի Պաղասարեան , Օր . Աղանի Քիւրքճեան , Տիկին Ալթուն Գաղանճեան , Տիկին Պութիկէ , Տիկին Եսթեր , Ասթիք եւ այլն : Օր . Լուսիա Յովսէփեան եւ Բամբիչ Էլմաս Հապիպեան :

Գօլէճի Սանուհիք ընդ ամենը 33 հատ են : Գօլէճը կը բաղկանայ 5 կարգերէ — Ա . Ֆրէշմըն , Բ . Ֆրէշմըն , Սօֆօօր Ճոնսըր եւ Սինըր :

Ա . Ֆրէշմընի դասերն են Ս . Գիրք , 4րդ Royal Reader գրագիտութիւն , կենդանարանութիւն , բնական Աշխարհագրութիւն , ձեռագործութիւն , շարադրութիւն եւ երգի դաս :

Բ . Ֆրէշմընի կարգալիքը Ս . Գիրք Բանալի , Մատենագրարան , Ալճէպրա , Շարադրութիւն եւ երգի դաս : Սօֆօօր . — Ս . Գիրք , պատմութիւն (գասաւորն

Թէնէքէճեան էֆէնտին) Քիմիք կենդանարանութիւն , զրագիտութիւն եւ շարադրութիւն (Սօլիկեան էֆէնտին) : Ճենիլըր . — Ս . Գիրք , պատմութիւն , բնագիտութիւն , երկրաբանութիւն , 5րդ Royal Reader շարադրութիւն եւ երգի դաս :

Սինըր կարգի Սանուհիք Ճենիլըրութիւնէ սկսած դասերուն շարունակութիւնը կը լինցնեն :

Գօլէճցիներու դասերը արական ճիւղի Փրօֆէսէօրներէն կ'աւանդուի :

Այս գօլէճը ամէն տարի իր դոնացուցիչ շրջանաւարտներն կ'ունենայ :

Ճարդ բաւական շրջանաւարտներ դուրս հանած է :

Այս ամբողջ հաստատութեան հսկիչն ու խնամակալուհին համեստափայլ միս Տեօնեչչն է : Ահա անձնաւորութիւն մը՝ որ Սարբերդի եւ շրջակայ գիւղերուն էն սիրելին է մանաւանդ այս պարագայիս աւելի սիրելի եղաւ անխոջ ջանիւքն Ամերիկեան փափկազգաց շէյնսիներուն ոմանց աջակցութեան արժանայնելով զաստիքալիման պապակուն բայց նիւթական անձկութեամբ տառապող հարիւրաւոր աղջիկներ : Խոստովանանք ըլլայ , արդէն հարիւրէն մին հազիւ դպրոցի թոշակ , տուրկէրի (poarding expense) եւ հանդերձելիսի ծախք կը վըճարէ :

Հաւատացէք , Պօլոս ուսեալ օրիորդներ . դուք Հայ ըլլալով իսկ չունիք այնպիսի անձնուէր սիրտ մ'ապրելու յօգուտ դաւառայի խեղճ , մտաւորապէս խեղճ հայուհեաց կրթութեան համար , որքան այս Ամերիկացի կոյսը - Միս Տէօնեչչն ունի :

Դուք որ թիւրեւս չէք խոնարհիլ շրջիլ տղիտութեան խաւարին մէջ ընկղմող ներքին գաւառները . (խօսքս հարուստ օրիորդաց) : Դուք որ չունիք ճշմարիտ ազնուութիւն բուժելու ձեր Ազգին զգալի մի վերքը , լճացման վերքը , որ ապագայ սերնդեան յետադիմութիւն պիտի առթէ , Միս Տէօնեչչն ունի . նէ անգոսնելով նոր աշխարհի փառքն ու վայելքը , յանձն առած ամեն ցաւ ու արգել , եկած է ցուցնել ձեր քոյրերուն ճշմարիտ նկարագրի ուղին , ապագայ մայրութեան կարեւոր դերը եւ ուսուցանել արդի քաղաքակիրթ աշխարհի սկզբունքի եւ զարգացման ուղղութիւնը : Միս Տեօնեչչին պէս համեստութեան մարմնացումը եղող քիչ շէյնսիներ կը գտնուին մինչ իսկ Ամերիկայի մէջ :

Իր մեղմանուչ ընաւորութեամբ սիրալիր նայուածքը ամեն տեսնողի մտքին վրայ անեղծանելի տղաւորութիւն մը կը թողու :

Գիշերօթիկ այն աղջիկներն , որք մեղամաղձիկ դէմքով , թախծալիք սրտով , ինչ ինչ պարագայներէ զրդեալ , կը միան ու ապրնապին , Միս Տէօնեչչին սենեկէն կ'ելլեն բողբոլին ուրախ ու ժպտերէս : Որովհետեւ նէ գիտէ մէն մի աղջկան խորը թախանցել պարագայներով մէկտեղ :

Միշտ ժպտալի իշուրթ կը համակրի մեծին ու փոքրին : Անհուն համբերութիւն ունի ծոյլին ու անհաւա-

տարիմին, խրախուսելով զայնս գործունէութեան եւ նկարագրի կատարելութեան :

Արդարեւ անուրանալի այ է թէ ինք ընածին կարողութիւնն ունի վարչութեան :

Մոռցանք ըսելու թէ իր հետ աշխատակից ունի բնիկ Խարբերոցի տիկին ճուհար էնֆիէճեան եւ Տօքթ. Պարնըմի գուստրը միս Պարնըմ, որոնք իրեն չափ ազնիւ ու համակրող են. կան նաեւ Ամերիկացի ուրիշ երկու վարժուհիներ, որոնք մերթ կը պտըտին զիւզէ գիւղ, խրճիթէ խրճիթ ուսուցանելով եռանդ ու արթնութիւն Քրիստոնէութեան համար :

Մեր երախտագիտական զգացմամբ լի շնորհակալիքը, յիշեալ խնամակալուհւոյն եւ վարժուհեաց :

Իրենց զիւցազնական գործոց ի քաջակրութիւն կը մաղթենք որ երկինք վարձատրէ ընդ միշտ օգտաշատ արդեամբ :

ՍԻՐԱՆՆ

ՄԵՂՈՒԻԿԸ ԳԱՐՆԱՆ ՄԷՋ

Գարուն է : Արեւը լեռներէն ձիւնը արդէն հալեցուցած էր, կանաչ ծիւրը թարչամեալ ցօղուններէն դուրս կ'ենէին. ծառերը արդէն արձակեր էին իրենց բողբոջները : Ահա, այս միջոցին արթնցաւ մեղուիկը իւր խոր քունէն, որու մէջ ամբողջ ձմեռը մնացած էր : Նա չփեց աչքերը, եւ արթնցուց իւր ընկերները : Անոնք բացին դուռը եւ նայեցան թէ՛ արդեօք ձիւնը, սառը եւ հիւսիւսային հողմը արդէն մեկնած էին : Եւ ի՞նչ տեսնեն, ամեն կողմ պայծառ ու ջերմ արեւու ճառագայթը կը տիրէր : Ան ատեն սահեցան իրենց փեթակէն գուրս, սրբեցին իրենց թեւերը եւ փորձեր կ'ընէին դարձեալ թռչելու : Անոնք զէպի խնձորենին եկան եւ հարցուցին. «բան մը չ'ունի՞ս անօթի մեղուիկներուս համար :» Խնձորենին ըսաւ. «Ո՛չ, ինձի չատ կանուխ եկաք, իմ ծաղիկներս կողոնին մէջ են սակաւին, եւ ուրիշ բան մը չ'ունիմ : Կեռասնիկին զացէք :» Ան ատեն զէպի կեռասնին թռան եւ ըսին. «սիրելի կեռասնիկ, արդեօք ծաղիկներ չ'ունիս անօթի մեղուներուս համար :» Կեռասնին պատասխանեց. «վաղը դարձեալ եկէք, այսօր կողոններս սակաւին բոլորն ալ գոց են : Երբ անոնք բացուին, սիրով կ'ընդունիմ ձեզ :»

Ան ատեն թռան զէպի կակաղենին (չալէ) : Արդարեւ սա մեծ ու գունաւոր ծաղիկ մըն ունէր : Սակայն ո՛չ անոյշ բոյր եւ ո՛չ քաղցրութիւն կար անոր մէջ, մեղուները ասկէ հիւթ չ'էին կրնար քաղել : Անոնք յուսահատ, որոշեցին ականջը եւ անօթի տուն դառնալ... երբ ցանկին մէջ կանգնած տեսան մուկ - կաղոյս ծաղիկ մը : Ասիկա մանուշակն էր : Սա ամենայն համեստութեամբ կ'սպասէր մինչեւ մեղուաց գալը, եւ ահա, բացաւ անոնց իւր բաժակը, որ անուշահոտութեամբ եւ քաղցրութեամբ լի էր : Մեղուները լաւ մը յաղնալէն ետքը, հետեւին մեղր ալ բերին զէպի տուն :

Վ. ԳՈՒՐԿՄԱՆ Թարգ, ՂԱԶԱՐՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՇՈՒԱՅԼՈՒԹԻՒՆ

Բարեկամք, ես այս աշխարհէն կամայ կամայ բան մը չհասկնալ սկսայ : Մարդիկ ինքզինքնին երգելու, պարելու, խմելու, զուարճանալու, երեկոյթներ տալու, երեկոյթներ երթալու տուած են, հարուստները ստակ ունենալուն համար կը մտնեն, ազգասները ստակ չունենալուն վրայ բարկացած ուրիշներէն փոխ կ'առնեն ու կը վատնեն, մին պարտական կ'ըլլայ միւսը պարտատէր, մին առնելիքը կուզէ չի կրնար առնել, միւսը պարտքը տալ կ'ուզէ ու չի կրնար վճարել, եւ ահա բան մըն է կը դառնայ :

Մարդոց մէջ կան անանկներ որ միզք գործելէ կը վախնան, եւ ոմանք ալ ամօթէն : Ամօթն այսօր դաճած մ'է, իսկ անամօթութիւնը հսկայ, ամօթն պարտեալ անամօթութիւնը յաղթող, եւ իրաց այս վիճակին մէջ հրամմէ դուն եղիր իմ սեզս եւ գործ չունիս գրէ, խրատէ, ծաղրէ, թէ որ ծաղրուիլ կուզես նէ հրամմէ ծաղրէ :

Եւ իրօք ալ անանկ է աշխարհիս վրայ ամենէն ծաղրելի էակն ես եւ որ ամէն զուարճութիւններէ հետու ըլլալով ուրիշներուն զուարճութիւններուն ետեւէ ինկած եմ, անոնք զիշերները կը պարեն, կ'երգեն ու մինչեւ սառու կը նստին, եւ իմ անկողինէս ելած ժամանակս անոնք անկողին կը մանեն, անոնք իրիկունները ժամը 11 ին տուն կը դառնան, ես 1 էն առաջ չեմ կրնար գրասենեակէս մեկնիլ, ինչո՞ւ, որովհետեւ երիտասարդին մէկը շոտլոթեամբ շատ պարտքի սակ մնացեր է եղեր ասոր վրայ անանկ յօղուած մը գրելու է եղեր որ թէ ինչպանէն ու թէ կրթէ : Երիտասարդն անդին ուզածին պէս զբօսնու պարէ, խնդայ, հագուի, սգուի եւ ես ասդին անոր վրայ յօղուած զրելու եմ եղեր : Ասիկց աւելի ծաղրելի ի՞նչ կրնայ ըլլայ, Բայց, ես երկար ատեն ծաղրելի չեմ կրնար ըլլալ, զրիչս կը կտորեմ կազամարս կը կտորրանմ, մեկանը կը թափեմ, թուղթերը կը պատուեմ եւ զուարճութեանց ճամբան կը բռնեմ :

Քանի որ մեծամասնութիւնն անկից կը քալէ, եւ քանի որ մեծամասնութիւնն իրաւունք կունենայ, ինչո՞ւ զբօսանքներէ զրկուիմ :

Եւ ինչո՞ւ չընեմ, ձկնորսին կինը հարուստին կնկան նայելով անոր պէս զարդարուիլ կ'ուզէ, եւ էրիկը կը անանկացնէ :

Կօչկակարին կինը սեղանաւորին կնկան նայելով անոր պէս հագուիլ կ'ուզէ եւ էրկանը հետ ամէն զիշեր կը կուռի :

Խմբազիր մը պարի դասատուի մը պէս կ'ուզէ հագուիլ սգուիլ ու ինքզինքը կը կործանէ :

Գրադիտութեան դասատու մը նուագագործի պէս կուզէ հարուստ ըլլալ եւ բարկութենէ կը ճաթի :

Ժամկոչը քահանայի պէս կը զգեստաւորի, քահանան վարդապետի պէս եւ վարդապետներն եպիսկոպոսներու պէս ըլլալ կուզեն :

Ո՛վ անտեսագիտութիւն, ո՛վ պարզութիւն, միայն ինձի՞ համար եկած էք աշխարհ, եթէ ինձի համար եկած էք ես դարձէք, եթէ ամենուն համար եկած էք

Թող տուէք օձիքս եւ քիչ մ'ալ ուրիշներուն քովը գացէք եւ ինքզինքնիդ անոնց պաշտել տուէք, հերիք պաշտեցի ձեզի, հերիք խունկ ծխեցի ձեր առջեւ, բոլոր Հայ տուները գացէք եւ տեսէք թէ ինչեր կան հոն :

Աղջկան մէկը շապիկը կը ծախէ միտայի մը համար, ուրիշ մը բերնին հացը քորտէլայի կուտայ: Հազիւ ապրելու կարող երիտասարդ մը անօթի կը մնայ ու շիք պասթօն մը կը դնէ: Աղքատն ամուսին ստակն զօգայի կուտայ սիւսի համար, եւ առանց ամուսին կը մնայ, ուրիշ մը բրինձի ստակը բուտայի կուտայ, կրկին ուրիշ մը բոլոր հագուստները ծախելով պիւլոս մը կը դնէ, եւ տարիներով պարապ կը մնայ:

Ո՞ր մէկը յիշեմ, որ մէկը համբում, որ մէկը գրեմ, որ մէկը ծաղրեմ, ըսէք ինձ ո՞վ անտեսագիտութիւն, ո՞վ պարզութիւն, ո՞վ Հայեր:

ՄԱԿ ՇԱՅԵԼՈՒ ԳՈՐԾԵՐ

Մաթէոս աղա, ճանրմ, սա մեր տղուն գործ մը չը դտար քնաց:

— Էֆէնտիմ, աղադ ի՞նչ գործ կուզէ, ի՞նչ գործ կրնայ ընել:

— Ծանրմ ստակ ըլլայ տէ ամէն գործ կրնայ տեսնել:

— Անանկ է նէ թող էչ մը առնէ,

— Շատ աղէկ, առնէ:

— Մեծկակ սնտուկ մ'ալ շինել տայ իշուն վրայ դնէ,

— Շատ աղէկ դնէ,

— Մնտուկին մէկ կողմը տակառ մը բուտրա դնէ, միւս կողմն թանթէլա, քորտէլա, տակառ մ'ալ կարմիր, թաղերը թող պտըտի,

— Թող պտըտի,

— Անանկ կը յուսամ որ սերմայէն հանելէն վերջը քանի մը դուրուշ ալ կ'ելէլցընէ:

— Թող վաստրկի:

— Ասկից աղէկ դո՞րծ կուզէ, դնա դուրցէ իրեն, վաղուքնէ էչ մը ծախու առնէ եւ գործի սկսի:

— Թող ընէ ըսինք ամա, տղաս ուսումնական է, քերականութիւն գիտէ, Տաճկերէն գիտէ, Ֆրանսերէն գիտէ, Անգլերէն գիտէ, աշխարհագրութիւն գիտէ, ինչ գիտնամ, դեռ ուրիշ շատ մը բաներ գիտէ, ինչպէ՞ս էչը առջեւը ձգած փողոցները բան ծախէ:

— Էչը թող ետեւը ձգէ:

— Ան ալ չ'ըլլար:

— Թող իշուն վրան նստի:

— Իշուն վրայ նստելուն մէջ ինչ անպատեհութիւն կայ, էչը կ'անակը առնէր նէ ան ստեն կ'ըլլար անպատուութիւնը:

— Ծանրմ իր նմաններն առտու իրինկուն թրամվայ կը նստին տէ, տղուն դժուար կուգայ. ճանրմ Մաթէոս ուրիշ գործ մը գտնայիր:

— Շուկային մէջ պղտիկ խանութ մը բռնէ,

— Բռնեցինք:

— Սամավար մը առ,

— Առինք,

— Տղադ ալ խանութը դիր, թող ձեռքը չայ ծախէ ամառը ջուր ու շաքարածականը հանէ,

— Հանէ ամա, ուսումնականի մը չայ ծախել, ջուր ծախել կ'ըլլայ մի:

— Ջուր խմել, չայ խմել կ'ըլլայ տէ, ջուր, չայ ծախել ինչո՞ւ չպիտի ըլլայ:

— Տեսնողը ի՞նչ կ'ըսէ:

— Ծանրմ Մաթէոս աղա, ուրիշ գործ մը գտնայիր,

— Ֆրանսերէն նամակ կրնա՞յ գրել,

— Տաճկերէն կրնա՞յ գրել,

— Ֆրանսերէն կը գրէ ամա, նամակ չկրնար գրել:

— Տաճկերէն գրել աղէկ գիտէ ամա իմլան չգիտեր,

— Տեսարակ բռնել գիտէ՞,

— Մէկու մը քով չգնաց որ գիտնայ:

— Ուրեմն ի՞նչ գիտէ,

— Հայերէն գիտէ, Ֆրանսերէն գիտէ, Անգլերէն գիտէ . . .

— Ասոնք գիտնար նէ իմ հարցուցածներս ալ գիտցած պիտի ըլլար,

— Վաճառականի քով եթէ չըլլար, Մաթէոս աղա, ուրիշ գործ մը գտնայիր,

— Կօչկակարի մը քով աշկերտութեան տուր:

— Տէր ողորմեա, ատանկ նազիկ տղուն կօչկակարութիւն կը վայէ՞ մի, մայրը չիմանայ:

— Կօչկակարութիւնը ի՞նչ ունի որ,

— Բան մ'ալ չունի ամա, որչափ ըլլայ նէ կօչկակարութիւն է, տղաս ուսումնական խօսակցութեան մը մէջ մտնայ նէ կօշիկիդ վեր մ'եղջար կ'ըսեն, հէմ որչափ ըլլայ նէ կօչկակարութիւնը սանկ արուեստ մ'է, դուզում Մաթէոս աղա, ուրիշ մէկ յարմար գործ մը գտնայիր, ճանրմ, սանքի գործ ալ չկայ:

— Ինչ տեսակ գործ ուզելդ խելքս չհասաւ որ:

— Ան տեսակ գործերէն ըլլայ որուն մէջ կարգացող երիտասարդի մը պէտք ունենան, պագի անանկ մարդիկ կ'ըլլան որ ճառ կարդացող տղայ կը փնտռեն:

— Վաճառականները ճառ կարդացողն ի՞նչ պիտի ըսեն:

— Եկող գացող միւշտէրիներուն ուսումնականութեան վրայ, դաստիարակութեան վրայ ճառ կը կարգայ ու միւշտէրիները կը լուսաւորէ, լուսաւորեալ միւշտէրի ունենալն ալ շահաւոր է կարծեմ,

— Ծանրմ միւշտէրիները ճառ մտիկ կ'ընեն,

— Ծառ մտիկ չեն ընել նէ Ֆրանսերէնէ-Հայերէնի, Հայերէնէ-Ֆրանսերէնի թարգմանութիւններ ընէ ու միւշտէրիներուն հասկցունէ. ճանրմ Մաթէոս աղա սանկ գործ մը ըլլայ տէ տղուս փէք յարմար կուգայ:

— Հիմակու հիմայ ասանկ գործ մը չկայ, ըլլայ նէ իմաց կուտամ,

— Պարէ սանկ գործ մը ընէ, այսինքն

— Տղադ թող դուրս երթայ դասատուութիւն ընէ:

— Տղաս թող չիմ տար որ միւսակ դուրս երթայ հէմ ալ չիմ ուզեր քի վարժապետութիւն ընէ, ուրիշ գործ մը գտնայիր:

— Դերձակի մը քով դիր, դերձակութիւն սորվի :
 — Ուսումնական մը դերձակ կ'ըլլա՞յ մի ես, տղաս ուսումնական արուեստ մը կ'ուզէ, գրելով ու կարգալով զբաղիլ կ'ուզէ,
 — Խմբագրի մը քով դիր,
 — Անոնք ալ շատ ամսական կուտա՞ն մի ես,
 — Ճանրմ առջի բերան հէմ տղուդ սխալ թարգմանութիւններն հրատարակեն, հէմ ալ ստակ տան, տղադ սխալները քիչ մը շտկել սկսի նէ երկու երեք հարիւր դրուչ ամսական կուտան :
 — Ձեզի գլխու ցաւ տուի ամա կը ներէք, Մաթէոս աղա, ուրիշ գործ մը գտնայիր,
 — Ուրիշ գործ չկայ նէ ի՞նչ ընեմ,
 — Էյ պարա՞պ պտըտի տղաս,
 — Կուզէ պարապ պտըտի կուզէ լեցուն, այսչափ գործերէն մէկուն չհաւնողը ինք իր գլխուն ճարը կը գտնէ, հէմ մէյ մ'ալ տղուդ վրայօք ինծի խօսք մի զրուցեր տէ, ինչ կուզես նէ ըրէ :
 Ափսոս որ տղուդ համար գործ մը չկրցինք գտնալ...

ՆԿԱՐՆԵՐ

Մատմազէլ պու սէնէ զըշ զարպլը, քէօմիւրճէ հալինիդ նա՞նըլ :
 — Համտ օլտուն էլիցիդ, եանը պաշըմըզտա պիր քէօմիւրճիւ մաղազասը վար, արասա պիր իստէյօրսապ քիւֆէ քիւֆէ վէրիյօր :
 — Երւզիւ գաչա վէրիյօր :
 — Պիզ երւզ վէրտիք տէյի հերիֆ զըրգա էլիյէ պագմայօր :

* * *

Տէր եղբայր ի՞նչպէս այս եօթն շարթուց հարս փեսայ ընելիք ծուխեր ունի՞ս,
 — Անանկ բան մի հարցնիր, տէր եղբայր, ես հիմայ խալլախս պատէն կախիր իրիսկինիս հետ նստեր սիւզէնի կը բանիմ կոր :

* * *

Պարոն գրագիր տարեղլուխնիս մօտեցաւ հաշիւները կը պատրաստե՞ս կոր :

— Այո տէր իմ, կը պատրաստեմ կոր, բայց հաշիւներուդ ցոյց տուածին նայիս նէ հրամանքնիդ ալ ճամբորդութեան քեզիհրեհիդ պատրաստէք նէ քէշ չըլլար :

* * *

Աշխարհագրական. — Գետ Յորդանան որ կողմը կիջնայ, Նիկողոս :

— Հալըճը օղլուխն հիւսիսային կողմը, մէկալ օր խայըխով գացինք,

— Ի՞նչ կ'ըսես ծօ ես քեզի գետ Յորդանան հարցուցի,

— Ես ալ ֆեահըտհանէ ըսի վարժապետ :

* * *

Ստուգարանական. — Կանթեղին ստուգարանութիւնն ի՞նչ է Միրիճան,
 — Կայ անդ եղ,
 — Կատուինը :
 — Կայ ի տուն :
 — Ապրիս, Կայխափային ստուգարանութիւնն ալ Կայ ի ար բայ է չը մոռնաս :

* * *

Երաժշտական. — Բարձր օօ ին րե ին մի ին ձայնը կրնաս հանել Լեւոն,

— Հա՛յ, հա՛յ, եան կըն վա՛ր :

— Էյ ցած ֆա ին ոօշ ին, շա ին մի ին ձայնն ալ հանէ նայիմ :

— Իւսկիւտարտա՛,

Աֆէրիմ, էյ ասոնց ոտքին չափն ալ գիտե՞ս :

— Հապա միշտ չորսի վրայ աշկիւօ կ'երթանք :

Զ ՈՒԱՐ Ճ Ա Լ Ի Ք

Անգղիացի մը Բարիզի Աէնթ Օնօռէ փաղոցէն անցած միջոցին, գիպուածով կտորեց խանութի մը ապակին որուն արժէքն էր 10 ֆռանք :

Իսկոյն հանեց 20 ֆռանքնոց մը սուսու խանութպանին եւ վերադիրը պահանջեց. բայց խանութպանը կէս Նարօլէօն չունենալուն, ուզեց երթալ մօտակայ սեղանաւորէն բերել :

« Անօգուտ է, ըսաւ Անգղիացին. պակասը կը լեցընեմ :

Եւ իսկոյն ուրիշ ապակի մ'ալ կտորեց :

* * *

Ամուսնանալու վրայ եղող երիտասարդ մը քահանային գնաց խոստովանելու համար :

Քահանան ուշադրութեամբ մտիկ ըրաւ եւ թողութիւն սուսու անմիջապէս :

« Տէր հա՛յր, ըսաւ երիտասարդը, ապաշխարանք չէ՞ք տար կոր ինծի : »

— Միթէ չըսի՞ք որ քիչ օրէն պիտի ամուսնանաք :

* * *

Հնդիկ մը արքայութեան դուռը ներկայանալուն, Պրահմինը ըսաւ անոր.

« Բաւարան դացի՞ր ես :

— Ո՛չ, ըսաւ Հնդիկը, բայց ամուսնացած եմ :

— Անանկ է նէ, մտիր, տանջանքդ կրեր ես : »

* * *

Քրիստոնեայ մըն ալ, որ խղճի խայթեր ունենալով՝ արքայութեան դուռը համնելուն կը վարանէր ներս մտնելու, ստեսաւ որ ամուսնացած մարդիկ դիւրաւ մը ներս կ'ընդունուէին, ինքն ալ ոյժ առաւ եւ Պետրոս Առաքեալին մօտեցաւ :

« Ամուսնացա՞ծ ես, հարցուց Ս. Առաքեալն Պետրոս : »

— Երկո՛ւ անդամ, պատասխանեց մարդը՝ յաղթա-
կան շեշտով մը :

Ս. Պետրոս իսկոյն արքայութեան գուռը փակելով
անոր երեսին՝ ըսաւ .

« Ես դժբաղդները կ'ընդունիմ եւ ոչ թէ քեզի պէս
ապուշները . . . »

* * *

Պչրող կին մը, կ'ըսէ արեւելեան առած մը, կը նը-
մանի ստուերին որ քեզի կ'ընկերանայ . եթէ ետեւէն
վազես, քեզմէ հեռու կը փախչի . եթէ անկէ հեռանաս,
ինք քու ետեւէդ կուգայ :

* * *

Կին մը երկար ատենէ ի վեր կը թախանձէր իր ա-
մուսինը որ ծանրազին չըջագցեստ մը չինել տայ . բայց
ամուսնոյն — տիրող սնտեսական տապնապին պատճա-
ռով կը մերժէր շարունակ : Կինը՝ սրտմտած ըսաւ
անոր .

« Ազ վարմունքովդ վերջապէս զիս պիտի մեռցնես,
եւ յուղարկուորութեանս համար աւելի ծախք պիտի
ընես քան չըջագցեստիս համար :

— Միաւ ես, ամա, թաղման ծախքը մէկ սնդամ
կ'ըլլայ, » պատասխանեց փափկասիրտ ամուսինը :

ՏԱՐԵՑՈՅՑ 1898 ԹՈՒՈՅՆ

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԾԱՂԻԿ ԼՐԱԳՐՈՅ

Ասենէ մը ի մեր ազգիս մէջ տեսակ տեսակ օրա-
ցոյցներ երեւան ելած ըլլալով եւ ատոնց ամենքն ալ
սխալներէ զեղծ չ'ըլլալուն մենք ուզեցինք այս մասին
ազգերնուս օգտակար ծառայութիւն մը ընել ներկայ
անսխալ տարեցոյցը հրատարակելով :

ՅՈՒՆՎԱՐ 1. — ԲՇ. ԿԱՂԱՆԴ պահք Մննդեան եւ
ամեն Բարեգնորու 1. Վերօնիդաներու եւ ժողովրդեան
օր 7 բախիին : Ուզողը պահք կը բռնէ, չուզողը առա-
ւօտեան նաւակատիք կընէ . Գուշար գուժըլարի եւ
8—10 տարուան պուշտայներու եէնի պուշտայ ըսելով
սիրմիւշ կընեն :

ՅՈՒՆՎԱՐ 6. — ՇԲ. Խնդութիւն խալֆաներուն եւ
չըրախներուն եւ յուսահատութիւն ճէպը ծակ վարպետ-
ներու որ յայտ աւուր զպաշտօն մտատանջութեան :

ՓԵՏՐՈՒԱՐ 3. — ԴԿ. Սուրբն Սարգսի եւ որդւոյ նորա
Մարտիրոսին (հարսանիք ուրախութիւն է միշտ քահա-
նայից)

ՓԵՏՐՈՒԱՐ Կիրակի Բուն բարեկենդան օր քէօր զի-
նովութեան եւ տարեղլուս պարահանդէսի տրամութեան
Սամաթիոյ Գում Գափուի կանանց զիշեր ժամ 4 րոպէ 25 :

ՄԱՐՏ 1. — ԵՇ. Օր պահոց տօն Բիրէի տըշարըու-
թեան եւ յիշատակ չանագ չէօմէքներու կոտորածին :

ՄԱՐՏ 4. — Կիրակի Անառակին տօն անուանակոչու-
թեան ամենայն ընտրեալ պէճէրիքսիզ փեսայից եւ բարի-

ծաղիկ օրիորդաց, գիշերը կերկարի եւ ցերեկը կարճնայ,
ԱՊՐԻԼ 1. — Կիրակի օր մեծ (քանայրը) է Հայտար
բաշայի, զիրար խափես խուփես եւ տօն շախաչական
փորձութեանց :

ԱՊՐԻԼ 8. — Կիրակի Զատիկ տօն է մեծ, տրամութիւն
է զաւկի տէր եղող, ուրախութիւն է միշտ ծուխ ունե-
ցող քահանայից . տավուլ զուրնայով մեծ ուրախութիւն
կը կատարեն :

ԱՊՐԻԼ 23. — Խըարէլէզ կտրած է խուզիներուն եւ
տօն պօղազաւերաց :

ՄԱՅԻՍ 1. — ԵՇ. Օր կաթափաշխութեան յայտ աւուր
ամեն թէմպէլն կանուխ արթըննայցէ :

ՄԱՅԻՍ 17. — ԵՇ. Համբարձում օր վիճակի եւ ժո-
ղովուն կանանց վասն անուանակոչելոյ զմիմիանս, ելունն
ի հաւանի կոթին ի միջոյ չէօմէկին :

ՄԱՅԻՍ 18. — ԵՇ. Համբարձում յայտ աւուր միմիայն
ազգային Հիւանդանոցի պատուարեալք հէլվա եւ զէրտէ
բիլավ կերեսցեն եւ մաքրութիւն արեացեն :

ՅՈՒՆԻՍ 15. — Կիրակի ՎԱՐԴԱՎԱՌԻ Հայոց օր մեծ
թոշոցի անձրեւաբերութիւնք որ համայն մօշորբաներով
եւ խօփաներով կատարեսցի :

ՍԵՊՏԵՄԲԵՐ 20. — Օր իջանելոյ փուսոյն ի վերայ ծո-
վուն, դադարուն շոգենաւուց :

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30. — Կիրակի եօթն շաբաթու հարսա-
նիք օրն խնդութեան թրախօմայի, լաց ու ողբ տունը
մնացող օրիորդաց եւ Բուն բարեկենդան խալովուղաց :

ՆՈՎԵՄԲԵՐ 8. — Տնծութիւն ամսականաւոր պարոնաց
եւ ամենայն որ հանգիստ կերիցեն եւ պտոյտ առնեն :

ՆՈՎԵՄԲԵՐ 9. — ԵՇ. Պահոց ախրը խամսին խնդակ-
ցութեան ամենայն լազերաց որ յայտ աւուր զխամսի
ձուկն վարախլամիչ արարեալ միմեանց նուիրեսցին :

ՆՈՅԵՄԲԵՐ 9. — Կիրակի Զմեռնամուտ (գարագըշ) օր
խնդութեան է քէօմիւրճիներուն, մեծ տրամութիւն է
պարապ պտըսողաց եւ եալընխաթ եղողաց :

ՆՈՅԵՄԲԵՐ ԴՇ. Զմեռնամէջ եւ ձիւնաբեր հողմունք
յայտ աւուր զկնունն օղիի եւ բօմի ի ջնացունել զմար-
մին :

ԴԵԿՏԵՄԲԵՐ 16. — ԴԿ. Օր յայտ աւուր Ս. Յակով-
բայ Մծընայ հայրապետին որ տօն է Ս. Յակոբայ Անկե-
լանոցին, ուրախութիւն է միշտ աղքատաց պէօրէք գայ-
մագ ու հաւն կերիցեն, ձիւն եւ հողմունք :

ԴԵԿՏԵՄԲԵՐ 17. — ԲՇ. Կիւն տէօնիւմիւ . յայտ աւուր
փոփոխեսցին հողմունք :

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31. — ԿԴ. Օր Տիրութեան տղաքնին
դպրոց խրկող ծնողաց ցնծութիւն եւ ամպատում ուրա-
խութիւն ամենայն զրպանն ծակ պատուելաց որոց Կա-
զանդի նուէրներն նուազելով նախատօնակէ յայտ երե-
կոյին եւ վաղուեան առաւօտուն ընդեռնելի լինիցի ամէն :

Տեղի անձկութեան պատճառաւ «Հարսնիքի»
տարունակութիւնը յառաջիկայ բուով :

ԱՂԱՖՐԱՆԿԱՆ ՄԵՐ ՄԷՁ

Ալաֆրանկա կամ մտայի վրայ շատ բաներ կարգացինք շատ քարոզութիւններ լսեցինք, այսու ամենայնիւ ազդեցութիւն մը ըրած չէ մեզ տակաւին :

Ասկէ 40—50 տարի առաջ մենք էինք ալաֆրանկան, մտան պախարակողը, վերջը ջերմեռանդութեամբ ընդունեցինք զայն, այնպէս որ ձկնավտճառին ակնոցին պէս ամէն տեսակ Եւրոպական սովորութիւնները, քուրջերը սակառները մտցուց մեր տան մէջ, խիստ մեծ ակնածութեամբ եւ յարգանքով, քսան տարիէ ի վեր վըսար կը քաշենք եւ ասկէ վերջն ալ պիտի քաշենք տակաւին :

Մտողայ նկատմամբ անքաղաքավարութիւններ եւ այլ անվայել վարմունքներ, ամուսնաթողութիւններ, զորն ասեմ կամ զորն խոստովանիմ :

Հանրութեան իրական ծառայութիւն մը մատուցած ըլլալու անկեղծ փախաբով Մաղիկ պիտի փութայ ասկէ վերջը առիթը ներկայանալուն պէս հատիկ հատիկ ցուցնել եւ մասնամիջ ընել այդ զեղծումները որոնք դժբաղդարար մեր բարքերուն մէջ մուտ գտած եւ արմատացած են ամէն խաւերու մէջ (ըլլայ մութ խաւ, ըլլայ լուսաւոր խաւ, ըլլայ վառելու խաւ, ըլլայ առաւ փախաւ) մեծէն մինչեւ պղտիկը, ամէնը իր տեսակէտով :

Ա .

Վերծին, Վերծին, պատուհանը դոցէ ներս եկու, էթիէնը եկու, հայտէ վար երթանք :

— Ալօն մա չեր :

— Գա դուք ինծի պիտի մեռցնէք, այս ի՞նչ է ձեր բռնած ճամբան, ալ ամենուն բերանը ձուկ ու ծամոց եղանք հիմա երեքնիւ պ կը փարատեմ, աս ով տեսնաք նէ հետը ուշիչ կ'ըլլաք երևանիդ մերօնը փախեր է իսայրի :

— Մամա մենք ի՞նչ ըրած ունինք, վիրա մեզի բան կ'ըսես, դուն հիչ ճահիլութեանդ ասանկ բաներ ըրած չունիս, մենք անանկ ամենուն հետ կը խնդանք կը խօսինք ամա ներսիդինիս հիչ գէշութիւն չի կայ, ի՞նչ կուզես, մէկը տեսնեմք նէ փերիի պէս փախչի՞նք, լէլէշի պէս վա՞ր գայինք, ան մէյ մը մտքէդ հանէ մենք հիչ մէկ ատեն մը անուշնիս խօրեադ հանելու միտք չունինք, մենք սիվիլիզէ, ենք հասկցա՞ր մամա :

— Սիվիլիզի եղիք, ինչ կուզէք նէ եղիք ամօթ ըսած բան մը կայ աշխարհք արարատին քեփազէ կ'ըլլաք կոր : Մենք ձեր տարիքը եղած ժամանակնիս չէ քի էրիկ մարդու մը հետ տեսնուիլ, մեզայ, բէնձէրէէն պիլէ չէինք կրնար նայեր :

— Մամա, հիմայ օրթալըլը ալաֆրանկա է, գիտե՞ս ձերին հին գլուխները փարա չընէր :

— Ձերինը կ'ընէ՞ կոր, վայ գուլխունիդ ըլլայ, նէ կերածնիդ, նէ հագուածնիդ, նէ սգուածնիդ փարա մը կ'ընէ, հելէ սիւսերնիդ ալաֆրանկա է տէյի, քուրջէ պէպէք եղեր էք օրթան էք ինկեր :

— Մամա, դուն ալ մէյ մը բերանդ բանաս նէ ալ սուս չես ըլլար, քիչ մը սուս եղիր նայինք դուռը կը չալուի կոր ո՞վ է :

— Օ՛, Սարգիս աղան է, հայտէ սալօնը կլլանք, սա-

լօնը, Ձապել վար վաղէ :

— Սարգիս աղա, աս ի՞նչ հով փչեց, նէտէն կէլէ մտքերնիդ ինկանք, ոտքիդ ջուր թափելու է :

— Էֆէնախ մենք ձեզ չմոռցանք եկանք, դուք մեզ մոռցած ըլլալու էք :

— Սարգիս աղա, ժամանակը ասանկ կը բերէ դուք մէկ թարաֆ մենք մէկ թարաֆ, ինչ ընենք գոհութիւն Աստուծոյ ասոր ալ փառք տանք :

— Աղջիկները ո՞ւր են, օրթան չի կան :

— Գա աղջիկներ տանա վեր չէք ի գար, միտաֆիր եկու, փէնձիրէ կիւզէլիներ, բերանս բանալ մի՛ տաք :

— Աման Մարի պու մամա աս հալիմիզի պիլմէզ սըրալըր սէօյլէր . կէլին արթըք եօզարը չըգալլմ պիր ազ բիանօ չալալմ, գարչըքի իլէն սէ պիր ազ էլլէնէլիմ :

— Հայտէին էօյլէ իսէ :

— Ալօն չէ մաման :

— Պօծուա Սարգիս աղա, բարով եկեր էք, ի՞նչ պէս էք աղէկ էք, տունէ՞ն ինչպէս են, շնորհակալ ենք որ մեզ չէք մոռցեր :

— Սարգիս աղա, աղջիկները ամէն ատեն ձեր խօսքը կ'ընեն :

— Անիկայ իրենց աղնութիւնն է, Մարի, դուք էփ աղէկ վրայ էք եկեր ամա Վերծինը քիչ մը նիհարցեր է :

— Այո, Սարգիս աղա, ես քանի մը ամիս մեծ կղզին հիւր գացի շատ օգուտ ըրաւ ինծի, կղզիին աղուորութեանը նմանը չկայ, ինծի անանկ պատուեցին որ, ծովու վրայ պտըտեցներ մի, կազինօները իքրամներ մի կ'ըսես, որ մէկն ըսեմ :

— Ի՞նչ ըսել է, ինչու չպիտի ընեն ձեզի պէս քաղաքավար օրիորդի մը, նայինք քեզի պէս օրիորդ մը տեսած ունէ՞ն, ինչ որ ըրեր են նէ պէլքի քիչ է ու շատ չէ :

— Հէփչու :

— Խեր ըլլայ :

— Կենէ մեզ կը խորաթեն կոր :

— Թող խորաթեն, բայց մատմազէլները Վերծինը Մարին ինչո՞ւ չեն խօսիր կոր :

— Ի՞նչ խօսին, անոնց հիմա մտիկ ընելու վախիթնին է, հրամանքդ զրուցէ :

— Ես իմ գիտցածներս ըսի քիչ մ'ալ անոնք թող ըսեն, շատոնց է չէի տեսեր բաւական մեծցեր են :

— Մատմազէլ Վերծին, դուք ի՞նչպէս էք, հայրիկնիդ ի՞նչպէս է :

— Ի՞նչպէս ըլլայ, ինտոր գիտես նէ անանկ, իր գիտցածէն անդին անցած չունի, հազար ըսես նէ կէնէ անիկայ իրինկունները տոպրակը կունակը կը զարնէ կուգայ, հիչ խօսիլ ըսած բանդ չգիտեր :

— Ծանրմ ի՞նչ ընէ զավալը մարդը կը տատի տունը տեղը աղուոր աղուոր կը նայի, շնորհակալ չըլլա՞ք Աստուծոյ, չորս լիզու գիտցող երիտասարդները փողոցները սիւրիւմ սիւրիւմ կը պտըտին կոր, մէյ մ'ալ չլսեմ բերնէդ այդպէս խօսք մը :

— Ձէ ամա, Սարգիս աղա, մեր պատիւին կը զըպչի կոր, անցած օր Պօծմարչէի գովներէն մէկը եկեր էր

հոս, հայրս տեսաւ, իչէրտէքի օտառա օթուրան քիմ տիրոս, ըսաւ, ես ալ խպնելուս օթուգարա արբ, կէլիչ ուֆաք թէֆէք իսթէյօր ըսի, ինչ ընեմ, ախ Սարգիս աղա, սա մարդուն հալը փէք կը գոյլի կոր մնր ամուր բրօբբին:

- Ինչի՞ն ինչի՞ն:
- Սանքի մեր օնօրին, հէմէն Աստուած հոյին առներ տէ ազատէինք:
- Բարկութեամբ, մըսեր ատանկ խօսք, մեղք է ըսելով մեկնելու պատրաստուեցաւ:
- Ի՞նչ ածէլէ կ'ընէք կոր, հէլպէթ կ'երթաք, Սարգիս աղա:
- Ձէ ուշ մնացի, ըսաւ ու մեկնեցաւ:
- Հիմա հաւնեցա՞ք, հարեմնիդ ասխտար աւրեցիք, հիչ մէկ գաւակ մը հօրք մօրք մեռնիլը կուզէ՞: Ձի հասնէիք չի կատարէիք ըլլալու, քառասուն տարին հեղ մը մարդը տունընդիս եկաւ, տար փախաւ, անուշ մը օլտուն չի հանեցիք:
- Ալաֆրանկաին մէջ անանկ բան չի կայ, կենէ մի պաշայեր:
- Ալաֆրանկանիդ ալ գետինը անցնի դուք ալ պարապար:
- Հայտէ քա Ձապէլ հագուէ տէ քիչ մը Շիլի երկընմանք քեզի հետ:
- Գա ի՞նչ կայ որ հիմա դուրս կ'ելլաք սա վախիդ:
- Քեզի ի՞նչ, դուն մի խամուիր, դուն սա պօքնու թէմզցուր, Ֆիսթանիս փէչն ալ քակուեր է կարէ:
- Ահա ալաֆրանկան մեր մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ա.մեն. Ս. Պատրիարք Հայրը երէկ Ազգ. Պատրիարքարան իջնելով, մինչև իրիկուն գաւառներէն հասած գրութիւններն աչքէ անցուց եւ այլ ընթացիկ գործերով զբաղեցաւ:

— Ս. Պապին նուիրակ Տ. Պօնէթի ընկերակցութեամբ իր անձնական քարտուղարին եւ ուրիշ երկու վերափոխման ուխտի վարդապետաց երէկ Ազգ. Պատրիարքարան երթալով, փոխադարձ այցելութիւն մը տուաւ Ս. Պատրիարք Հօր:

— Անգղիոյ երեսփոխանական ժողովոյ անդամներէն Սըր էստա Մուն, ընկերակցութեամբ Անգղիական դեսպանատան Ա. Թարգամանին չորեքշաբթի օր Ազգ. Պատրիարքարան գալով եւ սակայն Ս. Պատրիարք Հայրը հոն չգտնելով իր այցետուրը ձգեց ու մեկնեցաւ:



Վ Ս Ե Մ Ա Փ Ա Յ Լ ՄԻՔԱՅԵԼ ՓԱՇԱ ՓՕՐԹՈՒԳԱԼ

Յաւ ի սիրտ կը ծանուցանենք զգառնաղէտ մահ Փորթուգալ Միքայէլ փաշայի որ Հինգշաբթի գիշեր ժամ 3 ին առ Աստուած փոխեցաւ ի հասակի 60 ամաց, խոր սոգոյ մէջ թողլով իւր ամուսինն ու սիրասուն գաւակուհիքը:

Միքայէլ փաշա երկար ատենէ ի վեր տակաւ առ տակաւ կը հիւժէր չաքարախտէ: Ա.մեն կանխահոգ եւ առողջապահիկ միջոցներ ի գործ կը գնէր հիւանդութեան

յառաջիաղացութիւնն կասեցնելու: Սակայն վերջերս այս աստիճան հետեւանօք վէրք մը հանած էր յորմէ անկարելի եղաւ ազատիլ:

Միքայէլ փաշա ծնած է Օրթաքէօյ 1837 ին եւ կը պատկանէր Հոյ Հոփմէտիան պատուաւոր գերզաստանի մը: Չաւակն էր Յովսէփ էֆէնիսի Փորթուգալիանի որ փողերանոցի գլխաւոր պաշտօնեաներէն մին էր:

Ոնամեալ դաստիարակութենէ մը ետքը կառավարական շատ մը շրջանակաց մէջ կարեւոր պաշտօններ կատարեց մեծ յաջողութեամբ եւ իր ուղղամտութեամբ, սիրահամբոյր բնաւորութեամբն ու աշխատասիրութեամբը ամենուն համակրանաց ու սիրոյն արժանացաւ:

Բազմաթիւ պաշտօններու մէջ ցոյց տուած վարչային եւ անտեսական կարողութիւնք զինքը արժանի կացուցին Կայսերական թարհածութեան որ Յակոբ փաշայի մահէն ետքը Ն. Կ. Վեհափառութիւնն իւր Անձնական Գանձուն Նախարարութիւնն յանձնեց Միքայէլ փաշայի եւ այս առթիւ թարձրացնելով զնա Վէզիրութեան:

Տէրութիւնն եւ ազգը մեծ մարդ մը կը կորանցնեն յանձին Փորթուգալ փաշայի որ պարկեշտ, ուղղամտ, խղճամիտ եւ աշխատասէր պաշտօնարարի մը գեղեցիկ տիպարն էր:

Սմբարբութիւնս իւր խորին ցաւակցութիւնն կը յայտնէ իւր ընտանեաց եւ ազգականաց:

Յուզարկաւորութեան կարգադրութիւնք դեռ զեկուցած չեն:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Ծաղիկի խմբագրութեան վերաբերեալ գրութիւնք պէտք է ուղղուին Ա. Տնօրէնութիւն Պաղտատեան Գրասան Գոշիս, Սուրբան Համամ 14:

Իսկ բաժանորդագրութեանց վճարման համար, չէք կամ այլ ստորագրելի թուղթ պէտք է զրկել դարձեալ Պաղտատեան Գրասանը, Յովհաննէս Տիւրկէրեան անուան նշանակելով:

Ծ Ե Ծ ՈՒ Ա Ծ Զ ՈՒ Տ Ի Ս Ա Հ ՈՒ Է

Թիթեղեայ տուփի մէջ. 250 կրմ. 3 1/2 զրշ.
 » » » 125 » 1 3/4 »
 Աղխաները մի մոռնա՛ք

Իիօի առաջին տեսակէ սոյն խանվէն տուփերու մէջ գրուած կը ծախուի ի նպատակ Ս. Յակոբայ Հիւանդանոցին, ուրիշ գոյացած հասոյթով հարիւրաւոր աղքատներ եւ անոր մանուկներ պիտի խնամուին, հետեւաբար ամէն ոք այս խանվէն գնելով, աման եւ աղէկ տեսակ խանվէ առած ըլլալէ զատ, աղքատներուն եւ հիւանդանոցին օգնութիւն մըն ալ ըրած պիտի ըլլայ:

Կեդրոնատեղին է, Ղալաթիա, Ենի ճամբի ճատտէսի, Ձինճիլլի խանին կից, թիւ 70. ուր պէտք է դիմել, անկասկած ըլլալու համար:

Կը ծախուի նաեւ հետեւալ խանութները եւ ուրիշ ծխավաճառներու եւ մանրավաճառներու քով:

Բերա, Շիտակ ճամբան 136 եւ 54 թիւ չաքարավաճառ Սարիմ աղայի խանութները:

Բանկալթի, մանրավաճառ Աճէմեան Գրիգոր աղաի խանութը:

Օրթաքէօյ, Քէթէնեան Վիչէն աղայի խանութը:

Արտօնատէր Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԸՆԱՆ
(Նախկին ՊԱՂՏԱՏԼԵԱՆ Տպարան)
Ս. Գոշիս, Սուրբան Համամ 14.